նոյն վիճակն ունեցան Մակեդոնիայից Բոլգարիա փախած գաղթականները, երբ Բոլգ. իշխանութիւնը ցանկացաւ նոցա Մակեդոնիա ուղարկել։

Թէ որքան այս դիւային գործը հոգածութեան առարկայ է գարձած թիւրք կառավարութեան համար՝ երևում է այն «գաղթականական յանձնաժողովից» որ տարիներ առաջ կազմակերպել է Սուլթանը և առել իւր խնամակալութեան տակ։ Իւր Պետական ծախքերին (գօրքին և ոստիկանութեան) փող չգտնող կառավարութիւնը առատ եկամտի աղբիւրներ է նշանակել յիշեալ յանձնաժողովի անտուկի համար, և այդ եկամուտը միայն 1899 թուի Իրատէի համաձայն՝ հասնում է 60,000 ոսկու, թող հետզհետէ շնորհուած աղբիւրները։

Այս բոլոր ոսկիները ծառայում են գաղթականութեան գործը թեթևացնելու։ Գաղթել ցանկացող Հայու տունը, կալուածքը գնել, ուրեմն միջոց տալ գաղթելու, իսկ կայքը յանձնել եկաւոր թուրքի կամ լեզկու, որոց հոսանքը միշտ կայ և գնալով ուռուկանում է։ Եթէ այս բանի վերայ աւելացնենք և այն հանգամանքը, որ Ռուսաստանի ժողովրդի համար հողի պակասութիւն է զգացուում, և շատ մօտ ապագայում Մեծ Ռուսաստանը ինքը գաղթավայրերի պիտի մանգայ, և Մանճուրական կորստաբեր պատերազմի նպատակներից մինն էլ մօտիկ ապագայի գաղթավայրն էր եղել, այն ժամանակ պարզ կլինի այն անհիմն «Ռուս գործակալների մատը» տեսնել Հայոց գաղթականութեան մէջ և կարելի է ասել, միակ և միակ գաղթելու պատճառը թիւրք կառավարութեան դժոխային քաղաքականութիւնն է։

Ս. Ցարուրիւնեան.

ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐՕՆ. ԺՈՂՈՎՈՑ ԱՏԵԱՆԸ ԵԼՆԵԼԻՔ ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՀՐԱՀԱՆԳ

1. Որ և է ամուսնական խնդիր, որ ամուսիններու իրարու վրայ գանգատներէն ծագում կառնէ, պէտք է նախապէս Մայրաքաղաքիս մէջ Դատաստանական Խորհրդոյ կողմէ, և գաւառաց մէջ վիճակային Դատաստանական Խորհրդոյ և Կրօնական ժողովոյ կողմէ դատաստանական ոճով քննութեան ենթարկուած, և գանգատանաց նիւթ եղող իրողութիւնը հաստատուած ըլլայ։

2. Հետևաբար որ և է խնդրագիր որ մանաւորաց կողմէ Կեդր. Վարչութեան Կրօն. Ժողովոյ կամ Պատրիարքարանի կուղղուի, Ժողովոյ ատեանը, չկրնար ելնել, այլ ըստ պատշաճին, կյղուի Դատաստանական Խորհրդոյ կամ Առաջնորդարանին:

3. Դատաստանական Խորհրդոյ կամ վիճակային Կրօն. Ժողովոյ տեղեկագիրը, օրինաւորապէս խմբագրեալ, իւր բոլոր յարակից վկայագիրներով և փաստաթուղթերով, կյղուի Պատրիարքին, Կեդր. Կրօն. Ժողովոյ որոշման ենթարկուելու համար:

4. Կրօն Ժողովը՝ իւր Ժողովականներէն մէնոյն կյանձնէ տեղեկագիրն ու յարակիցները սաուգելու համար, թէ պահանջուած պայմանները լրացուած են, ու եթէ լրացուած չեն, լրացուելու համար ետ դարձուին:

5. Երբ տեղեկագիրն ու յարակիցները օրինաւոր կերպով գրուած և լրացած են, Կեդր. Կրօն. Ժողովոյ ատեանը կելնեն, և ամուսնական գործոց յատուկ նիստերուն մէջ կկարդացուին և կքննուին:

6. Ժողովը խնդրոյն օրինաւորութեան և գանգատանաց իրականութեան վրայ համոզում գոյացուցած ատեն իւր առաջին վճիռը կարձակէ, որուն արդիւնքը կը լինի ամուսնոց առժամեայ բաժանում, արդար կողման սնունդի իրաւունք, և խնդրոյն յարմար պայմաններու ներքև հաշտութեամբ փակուելու դիտմամբ գրուած պայմանաժամի որոշում:

7. Այդ պայմանաժամը Ժողովոյ կողմէ կորոշուի անձանց և տեղւոյ և իրողութեան պարագայից համեմատ, և վեց ամիսէ առաջ դատը չկրնար նորոգուիլ:

8. Պայմանաժամէն վերջ, երբ դատը կը նորոգուի, պէտք է որ նոր տեղեկագիր մը կազմուի կատարուած իրողութեանց և տեղի ունեցած դիպուածոց վրայ: Տեղեկագիրը կկազմուի Մայրաքաղաքի մէջ Պատր. Փոխանորդին և գաւառաց մէջ վիճակին առաջնորդութիւնը վարող եկեղեցականին կողմէն:

9. Այդ տեղեկագիրէն յառաջ եկած եզրակացութեան հիմամբ, Կեդր. Կրօն. Ժողովը կուտայ օրինական վճիռը, ընդ որս և լուծման վճիռը՝ եթէ տեղի կայ:

10. Կեդր. Կրօն. Ժողովը լուծման վճիռը կուտայ միայն այնպիսի պարագայից մէջ, յորս ամուսնութեան նուիրական կապը յանցապարտ դրծով կեղծանի, կամ ապօրինի կատարման պատճառով առ ոչինչ կը համարուի, կամ ընական արգելքի պատճառով անհնար կդառնայ:

11. Երբ Կեդր. Կրօն. Ժողովը իրողութեանց պարագաներուն մէջ յատակ չգաներ հիմնական պատճառները, կամ թէ տարադէպ պարագաներու և կնճիռներու դժուարութիւններ կտեսնէ, խնդիրը Ամենայն Հայոց Հայրապետական Մայր Աթոռոյն Գերագահ իշխանութեան կներկայացնէ։

12. Ամէն պարագայի մէջ՝ մի անգամ կամ քիչ անգամ պատահած կամ առանձնական բնութիւն ունեցող յանցապարտ գործողութիւններ չեն կրնար լուծման բաւական պատճառ համարուիլ, այլ միայն տեղական և հատատական և հրապարականախատ դարձած գործողութիւններ են, որ ամուսնութեանց լուծման կրնան պատճառ և հիմ լինիլ։

13. Նմանապէս ոչ երբեք ամուսնական լուծման վճիռ կամ վերստին ամուսնութեան արտօնութիւն կրնայ տրուիլ երբոր փոխադարձ յանցապարտութիւն տեղի ունեցած է կամ թէ արդար կարծուած կողմը յանցապարտ կողման դայթակղելուն կամ տկարանալուն առիթ տուած է։

Կեդր. Վարչութեան Կրօնական Ժողովոյ որոշմամբ կազմեցաւ հրահանգս ի Իշ. գումարման, յ12 Յունիսի 1907 ամի, և մեք վաւերացուցանեմք և հրամայեմք ի գործադրութիւն։

Ի Պատրիարքարանիս. ի 15 Յունիսի 1907

Պատրիարք Կ. Պոլսոյ
ՄԱՂԱԿԻԱ ԸՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍ.